

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 12-ի հերթական նիստի:

գ. Փամբակ

Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Էմմա Գասպարյանը, Պավլիկ Պապինյանը, Սերյոժա Սարգսյանը, Արմենուհի Ոսկանյանը, Արայիկ Քոչարյանը, Գրիգոր Կարապետյանը, Աշոտ Անտինյանը և Շուշանիկ Հակոբյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը, Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակայում էին.

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ Սևակ Խաչատրյանը և Թիանա Բոջուկյանը՝ հարգելի պատճառներով:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամ Արշակ Սրայանը:

Նիստին մասնակցում էին նաև Լեոնապատ բնակավայրի „Երիտասարդների ծայնը,, երիտասարդական ՀԿ-ի նախագահ Լիաննա Աբաջանը և ՀԿ-ի անդամներ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 13.05-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 15-17-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ.

15. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2021թ-ի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

16. „Ա.Ա.Բ. պրոյեկտ,, ՍՊԸ-ին ընդերքօգտագործման նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:

17. Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող արոտավայրերը և խոտհարքները կարճաժամկետ՝ մինչև երեք տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, վարձավճարների գինը հաստատելու մասին:

Կողմ՝ 12 ձայների համաձայնությամբ որոշումների նախագծերն ընդգրկվեցին օրակարգում:

Նիստը վարողն խառնարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծերով:

Կողմ՝ 12, ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

հաստատված օրակարգը՝

1. Ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով սեփականության իրավունքով Լուսինե Սերյոժայի Ուփյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
զեկ. Ա. Օհանյան
2. ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի „Շիրմատուն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:
զեկ. Ռ. Մինասյան
3. Ուղղակի վաճառքով հողամաս օտարելու մասին:
զեկ. Ա. Օհանյան
4. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, մրցույթի և աճուրդի պայմանները հաստատելու մասին:
զեկ. Ա. Օհանյան
5. ՀՀ Լոռու մարզի „Մարգահովիտի գյուղական համայնքի կրթամարզամշակույթային համալիր,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:
զեկ. Ռ. Մինասյան
6. ՀՀ Լոռու մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի „Հեքիաթ,, մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:
զեկ. Ռ. Մինասյան
7. „Լոռու մարզի Բազում համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:
զեկ. Ռ. Մինասյան
8. „ՀՀ Լոռու մարզի Լեռնապատ համայնքի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:
զեկ. Ռ. Մինասյան
9. „Վահագնաձորի „Առվակ,, նախադպրոցական ուսումնական հաստատություն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:
զեկ. Ռ. Մինասյան
10. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դեբետ գյուղական համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն „Արևիկ,, մանկապարտեզ,, համայնքային ոչ

առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

11. „Ձորագյուղի Սիրանուշ Հարությունյանի անվան մսուր մանկապարտեզ, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

12. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի բնակավայրերում գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

13. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի 2022-2026 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

14. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2021թ-ի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

15. „Ա.Ա.Բ. պրոյեկտ, ՍՊԸ-ին ընդերքօգտագործման նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

16. Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող արոտավայրերը և խոտհարքները կարճաժամկետ՝ մինչև երեք տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, վարձավճարների գինը հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

17. Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով սեփականության իրավունքով Լուսինե Սերյոժայի Ուփյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի ժ/պ Արտակ Օհանյանը:

Ձեկուցողը ներկայացրեց, որ սեփականատերը արդեն իսկ սկսել է իր գործունեությունը, այն ընդլայնելու նպատակով ցանկանում է փոփոխել հողամասի նշանակությունը և համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և

նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում:

2. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի „Շիրմատուն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ միավորումից հետո Փամբակ համայնքը համարվում է իր մեջ ներառված 15 նախկին համայնքների իրավահաջորդ և կապված դրա հետ Փամբակ համայնքի ներքո գործող բոլոր համայնքային կազմակերպությունները՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները պետք է վերանվանվեն, որից էլ կբխեն կանոնադրությունների փոփոխությունները: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում:

3. ԼՍԵՑԻՆ - Ուղղակի վաճառքով հողամաս օտարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի ժ/պ Արտակ Օհանյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում:

4. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, մրցույթի և աճուրդի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի ժ/պ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ բազմաթիվ քաղաքացիներ դիմել են հողամասեր գնելու առաջարկով, առկա են նշված հողակտորների համայնքային սեփականության վկայականները և համայնքի ավագանու համաձայնության դեպքում կիրականացվի հողամասերի աճուրդ: Տեղի

ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12 ընդունվեց որոշում:

5. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի „Մարգահովիտի գյուղական համայնքի կրթամարզամշակույթային համալիր,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ռախսա Մինասյանը:

Ինչպես արդեն իսկ նշվել էր միավորման հետ կապված Փամբակ համայնքի ներքո գործող բոլոր համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները պետք է վերանվանվեն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում:

6. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի „Հեքիաթ,, մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ռախսա Մինասյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ - „Լոռու մարզի Բազում համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ռախսա Մինասյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում:

8. ԼՍԵՑԻՆ - „ՀՀ Լոռու մարզի Լեռնապատ համայնքի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ռախսա Մինասյանը: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ: Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում:

9. ԼՍԵՑԻՆ - „Վահագնաձորի „Առվակ,, նախադպրոցական ուսումնական հաստատություն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ռախսա Մինասյանը: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ: Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում:

10. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դեբետ գյուղական համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն „Արևիկ,, մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ռախսա Մինասյանը: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ: Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում:

11. ԼՍԵՑԻՆ - „Ձորագյուղի Սիրանուշ Հարությունյանի անվան մսուր մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ռախսա Մինասյանը: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ: Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում:

12. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի բնակավայրերում գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի Ժ/պ Ռաիսա Մինասյանը: Ձեկուցողը ներկայացրեց՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բոլոր մանկապարտեզների տնօրենների և աշխատակիցների գործառույթները նույնն են, առաջարկվում է բոլոր ՀՈԱԿ-ների աշխատակիցների աշխատավարձի դրույքաչափի նկատմամբ կիրառել միասնական մոտոցում և հավասարության սկզբունք:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում:

13. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի 2022-2026 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի Ժ/պ Ռաիսա Մինասյանը: Ձեկուցողը ներկայացրեց, որ քննարկվել են բոլոր բնակավայրերի առաջնային խնդիրները, ուժեղ և թույլ կողմերը: Ծրագիրը կազմվել է բոլոր բնակավայրերի համաչափ զարգացման, առկա ռեսուրսների ճիշտ բաշխման և առաջնային խնդիրների լուծման սկզբունքով: Համայնքում առկա խնդիրներից վերհանված առաջնային լուծում պահանջող գլոբալ հարցերը վեր են ածվել ներքոնշյալ 12 ծրագրերի.

- 1) Համայնքի բոլոր բնակավայրերի գլխավոր ճանապարհների կապիտալ նորոգում ասֆալտապատման կամ տուֆով սալարկման միջոցով
- 2) Համայնքի բնակավայրերի գիշերային լուսավորության խնդրի լուծում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմամբ
- 3) Փամբակ համայնքի Դեբետ բնակավայրում եվրոպական չափանիշներին համապատասխան մանկապարտեզի կառուցում
- 4) Համայնքի մանկապարտեզների վերանորոգում և գույքի ձեռք բերում
- 5) Համայնքում կոմունալ ծառայության հիմնում, աղբահանության կազմակերպում, ճանապարհների մաքրում սպասարկում և բարեկարգում, ջրագծերի կառուցում և ընդհանուր կոմունալ սպասարկում
- 6) Համայնքային սեփականություն հանդիսացող շենքի ամրացում և տանիքի կապիտալ նորոգում, որը հետագայում կարող է ծառայել որպես մշակութային օջախ, տարեցների ժամանցի վայր և մանկապարտեզ

- 7) Գյուղատնտեսության զարգացման խթանում Փամբակ համայնքում, գյուղ. տեխնիկայի ձեռք բերում
- 8) Ոռոգման ցանցի ստեղծում, հողագործության աշխատանքների ծավալի մեծացում
- 9) Սպորտ հրապարակների կառուցում, սպորտի զարգացում
- 10) Բնակչության սոցիալ տնտեսական վիճակի բարելավում
- 11) Բնական աղետների ռիսկերի կառավարում, գետի հունի ամրացում և սելավատարերի մաքրում
- 12) Բնապահպանական ծրագրերի իրականացում, ծառատունկերի կազմակերպում

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում:

14. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2021թ-ի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետի Ժ/պ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ համաձայն ՀՈԱԿ-ների հաստիքացուցակների փոփոխության կատարվել են հաշվարկներ և ՀՈԱԿ-ներին հատկացվող դրամաշնորհային գումարների չափը անհրաժեշտ է ավելացնել: Փոփոխվել են նաև եկամուտների որոշ ցուցանիշներ և ծախսային որոշ ուղղություններ, որոնք ներկայացված են որոշման հավելվածներում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստ վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում:

15. ԼՍԵՑԻՆ - „Ա.Ա.Բ. պրոյեկտ,, ՍՊԸ-ին ընդերքօգտագործման նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի Ժ/պ Արտակ Օհանյանը: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում:

16. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող արոտավայրերը և խոտհարքները կարճաժամկետ՝ մինչև երեք տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, վարձավճարների գինը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի ժ/պ Արտակ Օհանյանը: Նա ներկայացրեց ՀՀ Կառավարության որոշումներով հաստատված պետական և համայնքային գյուղատնտեսական նշանակության հողամասերի կարճաժամկետ՝ մինչև 3 տարով վարձակալությամբ տրամադրելու, վարձավճարների գների սահմանման անհրաժեշտությունը: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում:


17. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2022 թվականի հունիսի 14-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում:

Փամբակի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2022 թվականի հունիսի 14-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 13.00-ն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՎՎԱԿԱՐ	ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ	Ա. ՈՍԿԱՆՅԱՆ
Ս. ԱՆԱՆՅԱՆ	Ա. ՔՈԶԱՐՅԱՆ
Է. ԳԱՍՊԱՐՅԱՆ	Շ. ՀԱԿՈԲՅԱՆ
Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ս. ՄԱՐԱՆԴՅԱՆ
Պ. ՊԱՊԻՆՅԱՆ	Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ս. ՍԱՐԴԱՐՅԱՆ	
Ա. ԱՆՏԻՆՅԱՆ	





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 45-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2022Թ-Ի ՄԱՅԻՍԻ 12-Ի ԹԻՎ 06 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի և 16-րդ հոդվածի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ-ի մայիսի 12-ի թիվ 06 հերթական նիստի օրակարգը:
ՕՐԱԿԱՐԳ

„ 12 „ մայիսի 2022թ-ի թիվ 06 հերթական նիստի

1. Ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով սեփականության իրավունքով Լուսինե Սերյոժայի Ոփյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
2. ՀՀ Լոռու մարզի Մարզահովիտ համայնքի „Շիրմատուն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:
3. Ուղղակի վաճառքով հողամաս օտարելու մասին:
4. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, մրցույթի և աճուրդի պայմանները հաստատելու մասին:
5. ՀՀ Լոռու մարզի „Մարզահովիտի գյուղական համայնքի կրթամարզաձևակոյթային համալիր,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:
6. ՀՀ Լոռու մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի „Հեքիաթ,, մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:
7. „Լոռու մարզի Բազում համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:

8. „ՀՀ Լոռու մարզի Լեռնապատ համայնքի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:

9. „Վահագնաձորի „Առվակ,, նախադպրոցական ուսումնական հաստատություն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:

10. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դեբետ գյուղական համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն „Արևիկ,, մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:

11. „Ձորագյուղի Սիրանուշ Հարությունյանի անվան մսուր մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:

12. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի բնակավայրերում գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

13. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի 2022-2026 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին:

14. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2021թ-ի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

15. „Ա.Ա.Բ. պրոյեկտ,, ՍՊԸ-ին ընդերքօգտագործման նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:

16. Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող արտավայրերը և խտտհարքները կարճաժամկետ՝ մինչև երեք տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, վարձավճարների գինը հաստատելու մասին:

17. Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

Կողմ -12
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Չեղնապահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2022թ. Մայիսի 12
գ. Փամբակ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 46-Ա

**ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԼՈՒՍԻՆԵ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՈՓՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, հաշվի առնելով Լուսինե Ուիյանի հայտը, ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին, համայնքի ղեկավարի կողմից տրված նախագծային թույլատրությունը, ճարտարապետահատակագծային առաջադրանքը, Փամբակ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Լուսինե Ուիյանին սեփականության իրավունքով պատկանող 06-023-0604-0013 ծածկագրով 1.353834 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության այլ հողատեսք, ջերմոցներ՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու և սպասարկման նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

Կողմ -12
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

2022թ. Մայիսի 12
գ. Փամբակ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 47-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ „ՇԻՐՄԱՏՈՒՆ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 102-րդ հոդվածով, „Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին,, ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի ,,դ,, կետով, „Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ լոռու մարզի Փամբակ համայնքը հանդիսանում է ՀՀ Լոռու մարզի նախկին Մարգահովիտ համայնքի իրավահաջորդը՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի „Շիրմատուն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Մարգահովիտի բարեկարգում և սպասարկում,, համայնքային ոչ առևտրային կազմակերպություն անվանումով:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Մարգահովիտի բարեկարգում և սպասարկում,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ:

Կողմ -12
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒՀԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈՒՄ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2022թ. Մայիսի 12
գ. Փամբակ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 48-Ա

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. մայիսի 26-ի թիվ 550 որոշմամբ սահմանված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Տալ համաձայնություն Փամբակ համայնքի Լեռնապատ գյուղի 06-041-0202-0145 կադաստրային ծածկագրով 0,00426 հա գյուղատնտեսական այլ հողատեսքը ուղղակի վաճառքով 4000 /չորս հազար/ ՀՀ դրամ արժեքով Մկրտիչ Դարչինյանին օտարելուն:

Կողմ -12
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒԽԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2022թ. Մայիսի 12
գ.Փամբակ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
 ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 49-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ, ՄՐՅՈՒՅԹԻ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության „Հողային օրենսգրքի,, 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, „Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, „Հրապարակային սակարկությունների մասին,, ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն:
2. Աճուրդ-վաճառքով օտարվում են բնակավայրերի բնակելի կառուցապատման և գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր 21 լոտով.
 - Լոտ 1: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-102-0041-0066 ծածկագրով 0,041476 հա գյուղատնտեսական այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ:
 - Լոտ 2: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-102-0041-0065 ծածկագրով 0,06468 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 60000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ:
 - Լոտ 3: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-102-0008-0028 ծածկագրով 0,04 հա, գյուղատնտեսական այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ:
 - Լոտ 4: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-102-0041-0024 ծածկագրով 0,139092 հա, գյուղատնտեսական այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 140000 /մեկ հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ:
 - Լոտ 5: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-066-0101-0033 ծածկագրով 0,422864 հա գյուղատնտեսական այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 85000 /ութսունհինգ հազար/ ՀՀ դրամ:

- Լոտ 6: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-066-0101-0032 ծածկագրով 0,392312 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 80000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ:
- Լոտ 7: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-102-0012-0046 ծածկագրով 0,334518 հա բնակավայրերի այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 660000 /վեց հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ:
- Լոտ 8: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-041-0022-0045 ծածկագրով 0,02834 հա բնակավայրերի այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
- Լոտ 9: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-070-244-0073 ծածկագրով 0,05215 հա գյուղատնտեսական նշանակության վարելահող: Մեկնարկային գինը սահմանել 60000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ:
- Լոտ 10: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-041-0022-0044 ծածկագրով 0,06402 հա բնակավայրերի այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 224000 /երկու հարյուր քսանչորս հազար/ ՀՀ դրամ:
- Լոտ 11: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-041-0203-0104 ծածկագրով 0,11987 հա գյուղատնտեսական նշանակության վարելահող: Մեկնարկային գինը սահմանել 180000 /մեկ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:
- Լոտ 12: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-070-0063-0637 ծածկագրով 0,15452 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղ. արտադրական հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 750000 /յոթ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
- Լոտ 13: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-041-0022-0042 ծածկագրով 0,06402 հա բնակավայրերի այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 224000 /երկու հարյուր քսանչորս հազար/ ՀՀ դրամ:
- Լոտ 14: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-041-0266-0003 ծածկագրով 0,662962 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 300000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:
- Լոտ 15: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-041-0266-0004 ծածկագրով 0,110059 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:
- Լոտ 16: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-041-0266-0005 ծածկագրով 0,025636 հա գյուղատնտեսական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 12000 /տասներկու հազար/ ՀՀ դրամ:
- Լոտ 17: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0131-0018 ծածկագրով 0,030520 հա գյուղատնտեսական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ:
- Լոտ 18: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-036-0113-0008 ծածկագրով 0,455012 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
- Լոտ 19: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-059-0010-0002 ծածկագրով 0,168486 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 202200 /երկու հարյուր երկու հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ:
- Լոտ 20: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-059-0076-0001 ծածկագրով 0,220833 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս:

Մեկնարկային գինը սահմանել 265200 /երկու հարյուր վաթսունհինգ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ:

-Լոտ 21: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-059-0034-0021 ծածկագրով 0,405315 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 500000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Աճուրդի լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

3. Վարձակալության իրավունքով, գյուղ. գործունեություն ծավալելու նպատակով, 25 տարի ժամկետով տրամադրվում է գյուղատնտեսական նշանակության հողամաս 1 լոտով.

-Լոտ 1: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-041-0201-0095 ծածկագրով 0,1298 հա գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի արոտավայր: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

Վարձակալության մրցույթի լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

4. Համայնքի ղեկավար Ս. Կոստանդյանին՝ ապահովել աճուրդով վաճառվող և վարձակալությամբ հատկացվող հողամասերի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈՒՄ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2022թ. Մայիսի 12
գ.Փամբակ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 50-Ա

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ „ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 102-րդ հոդվածով, „Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին,, ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 11-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի ,,դ,, կետով, „Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ լոռու մարզի Փամբակ համայնքը հանդիսանում է ՀՀ Լոռու մարզի նախկին Մարզահովիտ համայնքի իրավահաջորդը՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. ՀՀ Լոռու մարզի „Մարզահովիտի գյուղական համայնքի կրթամարզամշակութային համալիր,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Մարզահովիտի կրթամարզամշակութային համալիր (ԿՄՄՀ),, համայնքային ոչ առևտրային կազմակերպություն անվանումով.

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Մարզահովիտի կրթամարզամշակութային համալիր (ԿՄՄՀ),, համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ:

Կողմ -12
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈՐՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

2022թ. Մայիսի 12
գ.Փամբակ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍԱՆԴՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 51-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ „ՀԵՔԻԱԹ,,
ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՁ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԱՆՎԱՆՈՒՄԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 102-րդ հոդվածով, „Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին,, ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 11-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի „դ,, կետով, „Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքը հանդիսանում է ՀՀ Լոռու մարզի նախկին Եղեգնուտ համայնքի իրավահաջորդը՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. ՀՀ Լոռու մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի „Հեքիաթ մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Եղեգնուտի հեքիաթ մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպություն անվանումով:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Եղեգնուտի հեքիաթ մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ:

Կողմ -12
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՐՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2022թ. Մայիսի 12
գ. Փանրակ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 52-Ա

„ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՔՆԻ ՆԱԽԱԴՊՐՈՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԱՆՎԱՆՈՒՄԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 102-րդ հոդվածով, „Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին,, ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 11-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի ,,դ,, կետով, „Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքը հանդիսանում է ՀՀ Լոռու մարզի նախկին Բազում համայնքի իրավահաջորդը՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. „Լոռու մարզի Բազում համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Բազումի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպություն անվանումով:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Բազումի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ:

Կողմ -12
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ

2022թ. Մայիսի 12
գ.Փամբակ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 53-Ա

„ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 102-րդ հոդվածով, „Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին,, ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 11-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի ,,դ,, կետով, „Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքը հանդիսանում է ՀՀ Լոռու մարզի նախկին Լեռնապատ համայնքի իրավահաջորդը՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. „ՀՀ Լոռու մարզի Լեռնապատ համայնքի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Լեռնապատի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպություն անվանումով:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Լեռնապատի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ:


Կողմ -12
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒԻԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈՒՄ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

2022թ. Մայիսի 12
գ. Փամբակ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 54-Ա

„ՎԱՀԱԳՆԱՁՈՐԻ „ԱՌՎԱԿ,, ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԱՆՎԱՆՈՒՄԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 102-րդ հոդվածով, „Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին,, ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 11-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի „դ,, կետով, „Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքը հանդիսանում է ՀՀ Լոռու մարզի նախկին Վահագնաձոր համայնքի իրավահաջորդը՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. „Վահագնաձորի „Առվակ,, նախադպրոցական ուսումնական հաստատություն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Վահագնաձորի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպություն անվանումով:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Վահագնաձորի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ:

Կողմ -12
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈՒՄ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

2022թ. Մայիսի 12
գ. Փամբակ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 55-Ա

„ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԴԵՔԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՔՆԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ „ԱՐԵՎԻԿ“,
ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԱՆՎԱՆՈՒՄԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 102-րդ հոդվածով, „Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին,, ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 11-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի „դ,, կետով, „Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքը հանդիսանում է ՀՀ Լոռու մարզի նախկին Դեքետ համայնքի իրավահաջորդը՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. „Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դեքետ գյուղական համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն „Արևիկ,, մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Դեքետի Արևիկ մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպություն անվանումով:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Դեքետի Արևիկ մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ:

Կողմ -12
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒԷԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈՒԱ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

2022թ. Մայիսի 12
գ. Փամբակ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 56-Ա

„ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՍԻՐԱՆՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՍՈՒՐ
ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԱՆՎԱՆՈՒՄԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 102-րդ հոդվածով, „Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին,, ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 11-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի ,,դ,, կետով, „Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքը հանդիսանում է ՀՀ Լոռու մարզի նախկին Ձորագյուղ համայնքի իրավահաջորդը՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. „Ձորագյուղի Սիրանուշ Հարությունյանի անվան մսուր մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Ձորագյուղի Սիրանուշ Հարությունյանի անվան մսուր-մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպություն անվանումով:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Ձորագյուղի Սիրանուշ Հարությունյանի անվան մսուր-մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ:

Կողմ -12
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՐՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ

2022թ. Մայիսի 12
գ. Փամբակ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 57-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ,
ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, „Նորմատիվ իրավական ակտերի մասին„ ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Մարգահովիտի կրթամարզամշակութային համալիր համալիր (ԿՄՄՀ)„ համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի: Ուժը կորցրած ճանաչել Մարգահովիտ համայնքի ավագանու 24.12.2020թ-ի թիվ 48-Ա որոշման թիվ 2 հավելվածը:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Մարգահովիտի բարեկարգում և սպասարկում„ համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի: Ուժը կորցրած ճանաչել Մարգահովիտ համայնքի ավագանու 24.12.2020թ-ի թիվ 48-Ա որոշման թիվ 3 հավելվածը:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Լեռնապատի մանկապարտեզ„ համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 3-ի: Ուժը կորցրած ճանաչել Լեռնապատ համայնքի ավագանու 24.12.2020թ-ի թիվ 53-Ա որոշումը:

4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Եղեգնուտի Հեքիաթ մանկապարտեզ„ համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը

և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 4-ի: Ուժը կորցրած ճանաչել եղեգնուտ համայնքի ավագանու 22.02.2021թ-ի թիվ 05-Ա որոշումը:

5. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Վահագնաձորի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 5-ի: Ուժը կորցրած ճանաչել Վահագնաձոր համայնքի ավագանու 27.09.2021թ-ի թիվ 26-Ա որոշումը:

6. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Դեբետի Արևիկ մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 6-ի: Ուժը կորցրած ճանաչել Դեբետ համայնքի ավագանու 21.01.2021թ-ի թիվ 02-Ա որոշումը:

7. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Բազումի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 7-ի: Ուժը կորցրած ճանաչել Բազում համայնքի ավագանու 18.01.2021թ-ի թիվ 02-Ա որոշումը:

8. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի „Ձորագյուղի Սիրանուշ Հարությունյանի անվան մսուր մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 8-ի: Ուժը կորցրած ճանաչել Ձորագյուղ համայնքի ավագանու 19.10.2021թ-ի թիվ 23-Ա որոշումը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022թ-ի հունիսի 1-ից:

Կողմ -12
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՀԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2022թ. Մայիսի 12
գ. Փամբակ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ „ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ (ԿՄՄՀ)“, ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՅՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշխատակիցների թվաքանակը՝ 26:

Ը/Ը	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐ ԶԻ ՖՈՆԴ
1	Տնօրեն	1	150000	150000
2	Հաշվապահ	1	120000	120000
3	Ուսումնական մասի ղեկավար	0.5	103 000	51 500
4	Գրադարանավար	1	100000	100000
5	Թանգարանի աշխատակից	1	95000	95000
6	Դաշնամուրի դասավոր	1	94000	99200
7	Դաշնամուրի դասավոր	1	94000	226000
8	Դաշնամուրի դասավոր	1	94000	219300
9	Նկարչության դասավոր	1	94000	164500
10	Դռնապան /բակապահ/	1	94000	94000
11	Բանվոր-հնոցապան	1	94000	94000
12	Հավաքարար /ԿՄՄՀ/	1	94000	94000
ՄԱՆԿԱՊԱՐՏԵՐ				
13	Մանկապարտեզի վարիչ	1	130000	130000
14	Դաստիարակ	2.24	100000	224000
15	Երաժշտական դաստիարակ	0.5	100000	50000
16	Դաստիարակի օգնական	2	95000	190000
17	Բուժքույր	0.5	100000	50000
18	Տնօրենավար	0.5	100000	50000
19	Խոհարար	1	95000	95000
20	Հավաքարար /ՆՈՒՀ/	0.5	95000	4700
Սպորտի խմբակներ				
21	Ավագ մարզիչ	1	95000	95000
22	Մարզիչ	2	94000	188000
23	Ֆուտբոլի մարզադաշտի պատասխանատու	1	94000	94000
24	Հավաքարար /մարզադպրոց/	0.5	94000	47000
	Ընդամենը	24.3		2725200

Փամբակ համայնքի ղեկավար՝

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ „ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ,, ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշխատակիցների թվաքանակը՝ 8:

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ Ը	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (սահմանափում է հասարիքային մեկ միավորի համար)	ԱՄՍԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐ ՁԻ ՖՈՆԴ
1.	Տնօրեն	1	130000	130000
2	Հաշվապահ	1	110000	110000
3	Վարորդ	1	110000	110000
4	Աշխրենկ	1	95000	95000
5	Բանվոր	2	94000	188000
6	Պահակ	1	94000	94000
7	Սրահի սպասարկող	0.5	100000	50000
	Ընդամենը	7.5		777000

Փամբակ համայնքի ղեկավար



Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ „ԼԵՌՆԱՊԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,,
 ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ
 ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշխատակիցների թվաքանակը՝ 10:

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱ ՑԻՆ ՄԻԱՎՈՐ Ը	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (սահմանափակ է հասարիքային մեկ միավորի համար)	ԱՄՍԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐ ՁԻ ՖՈՆԴ
1	Տնօրեն	1	130000	130000
2	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	0,25	120000	30000
3	Հաշվապահ	0,5	110000	55000
4	Դասարիարակ	1,12	100000	112000
5	Բուժքույր	0,5	100000	50000
6	Դասարիարակի օգնական	1	95000	95000
7	Խոհարար	1	95000	95000
8	Խոհարարի օգնական	0,5	94000	47000
9	Օժանդակ քանկոր	0,25	95000	23750
10	Հավաքարար	0,5	95000	47500
	Ընդամենը	6,62		685250

Փամբակ համայնքի ղեկավար



Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ „ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԵՔԻԱԹ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋ,, ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշխատակիցների թվաքանակը՝ 9:

Ը/Ը	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ Ը	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (սահմանափակ է հասարիքային մեկ միավորի համար)	ԱՄՍԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՖՈՆԴ
1	Տնօրեն	1	130000	130000
2	Մեթոդիստ	0,25	120000	30000
3	Դասարիարակ	1.12	100000	112000
4	Դասարիարակի օգնական	1	95000	95000
5	Հաշվապահ	0,5	110000	55000
6	Բուժքույր	0,5	100000	50000
7	Խոհարար	1	95000	95000
8	Տնօրենի օգնական	0,25	100000	25000
9	Հավաքարար	0.5	94000	47000
	Ընդամենը	6,12		639000

Փամբակ համայնքի ղեկավար՝



Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ „ՎԱՀԱԳՆԱՉՈՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,,
 ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ
 ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշխատակիցների թվաքանակը՝ 8:

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (սահմանվում է հասարիքային մեկ միավորի համար)	ԱՄՍԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՖՈՆԴ
1	Տնօրեն	1	130000	130000
2	Հաշվապահ	0,5	110000	55000
3	Դասարիարակ	1.12	100000	112000
4	Դասարիարակ /Անդառամուր քնակավ./	1.12	100000	112000
5	Դասարիարակի օգնական	1	95000	95000
6	Խոհարար	1	95000	95000
7	Տնօրենի օգնական	0,25	100000	25000
8	Հավաքարար	0.5	94000	47000
	Ընդամենը	6,49		671000

Փամբակ համայնքի ղեկավար՝



Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ԴԵԲԵՏԻ ԱՐԵՎԻԿ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»,
 ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ
 ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշխատակիցների թվաքանակը՝ 5:

Ը/Ը	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱ ՑԻՆ ՄԻԱՎՈՐ Ը	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (սահմանվում է հասարիքային մեկ միավորի համար)	ԱՄՍԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐ ՁԻ ՖՈՆԴ
1	Տնօրեն	1	130000	130000
2	Հաշվապահ	0,5	110000	55000
3	Դասարիարակ	1.12	100000	112000
4	Դասարիարակի օգնական	1	95000	95000
5	Խոհարար	1	95000	95000
	Ընդամենը	4.62		487000

Փամբակ համայնքի ղեկավար՝




Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ „ԲԱԶՈՒՄԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշխատակիցների թվաքանակը՝ 8:

Ը/Ը	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (սահմանվում է հասարիքային մեկ միավորի համար)	ԱՄՍԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՖՈՆԴ
1	Տնօրեն	1	130000	130000
2	Հաշվապահ	0,5	110000	55000
3	Դասարիարակ	1.25	100000	125000
4	Դասարիարակի օգնական	1.1	95000	104500
5	Խոհարար	1	95000	95000
6	Խոհարարի օգնական	0,5	94000	47000
7	Տարեավար	0,25	100000	25000
8	Հավարարար	0,5	94000	47000
	Ընդամենը	6,1		628500

Փամբակ համայնքի ղեկավար՝



Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ „ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՍԻՐԱՆՈՒՇ
 ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ-Ի
 ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
 ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշխատակիցների թվաքանակը՝ 5:

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱ ՅԻՆ ՄԻԱՎՈՐ Ը	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (սահմանափակ է հասարիքային մեկ միավորի համար)	ԱՄՍԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐ ՁԻ ՖՈՆԴ
1	Տնօրեն	1	130000	130000
2	Հաշվապահ	0,5	110000	55000
3	Դասարիարակ	1.12	100000	112000
4	Դասարիարակի օգնական	1	95000	95000
5	Խոհարար	1	95000	95000
	Ընդամենը	4.62		487000

Փամբակ համայնքի ղեկավար՝



Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 58-Ն

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հաստատել Փամբակ համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնակա հրապարակմանը հաջորդող օրվա նից:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
 ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
 ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
 ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
 ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
 ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՀԱՆԻԿ
 ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
 ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
 ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
 ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
 ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈՔԱ
 ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2022թ. Մայիսի 12
գ. Փամբակ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ**

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔ

**ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Հաստատված է Փամբակ համայնքի ավագանու

12.05.2022թ-ի թիվ 58-Ն որոշմամբ

Գ. Փամբակ

2022թ

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն
 - 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն
 - 2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը
 - 2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը
 - 2.4. ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ
 - 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ
 - 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում
 - 3.1. Համայնքի զարգացման տեսլական
 - 3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ
4. ՀՀԶՄ ֆինանսավորում
5. ՀՀԶՄ մոնիթորինգ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Մի րով ողջունում եմ Փամբակ համայնքի ազգաբնակչությանը և բոլոր նրանց ուլքեր հետաքրքրված են Փամբակ համայնքի անցուդարձով, կատարվող ծրագրերով: 2022-2026թթ հնգամյա զարգացման ծրագրի նպատակն է սահմանել համայնքի զարգացման տեսլականը՝ նորարար մոտեցումներով և գաղափարներով ընդգծել դրանց հասնելու հստակ մեթոդներն ու ճանապարհները:

Առաջիկա հինգ տարիների գործունեությունը միտված է լինելու բոլոր բնակավայրերի համաչափ զարգացմանը և ինքնության պահպանմանը: Գտնում եմ, որ համայնքի զարգացման կարևորագույն ռեսուրսներից է համայնքի բնակիչների ներուժը, որի արդյունավետ և ճիշտ կառավարման դեպքում կունենանք տնտեսապես զարգացած, ապահով և հզոր համայնք: Համայնքի յուրաքանչյուր բնակիչ պետք է զգա իր անմիջական մասնակցությունը համայնքի զարգացման և տեղական ինքնակառավարման գործում:

Տեղական ինքնակառավարման մարմիններում արդյունավետ կառավարում իրականացնելու գլխավոր պայմաններից մեկը՝ գործունեության համաչափ ծրագրավորումն է գալիք ժամանակաշրջանի տարբեր հատվածների համար: Ռեսուրսների ճիշտ պլանավորման արդյունքում կմշակվեն կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր, որոնց իրականացման արդյունքում կլուծվեն բնակավայրերի առաջնային խնդիրները:

Սահմանափակ ֆինանսների արդյունավետ ծախսումը, նոր միջոցների ներգրավումը, հարկերի հավաքագրումը կնպաստեն համայնքի առաջնահերթ խնդիրների լուծմանը, բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Հուսով եմ, որ սատար կկանգնեք, որպեսզի կարողանանք իրականացնել մեր առջև դրված խնդիրները, համայնքը դարձնել բարեկարգ, զարգացած և տնտեսապես կայուն:

Համայնքի զարգացման տեսլականն առաջիկա 5 տարիների համար.

Ռազմավարական քաղաքականության տեսանկյունից Փամբակ համայնքի հնգամյա ծրագրի հետանկարային ուղղությունները հետևյալն են.

- Ստեղծել բարձրորակ սպասարկում մատուցող կոմունալ տնտեսություն՝ հզոր ենթակառուցվածքներով
- Մեծ զարկ տալ տուրիզմի զարգացմանը
- Հաշվի առնելով, որ Փամբակ համայնքի մեջ ներառված են 15 գյուղական բնակավայրեր անհրաժեշտ է համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը՝ ձեռք բերել գյուղատնտեսական տեխնիկա, իրականացնել բնապահպանական ծրագրեր, կազմակերպել ծառատունկ
- Հատուկ ուշադրություն դարձնել կրթությանը, մշակույթի զարգացմանը
- Միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.

- Բարելավել համայնքի ֆինանսական կարողությունը՝ ներգրավելով միջազգային դոնոր կազմակերպությունների
- Նպատակային օգտագործել համայնքային բյուջեի միջոցները
- Բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը
- Ստեղծել նոր աշխատատեղեր
- Զարկ տալ բնապահպանական աշխատանքներին

Վերոնշյալ ուղղությունների զարգացման գործում կներգրավվի համայնքի բնակիչների ներուժը, կօգտագործվի մարդկային ռեսուրսը, որը համարում են բարձրագույն արժեք: Համայնքի յուրաքանչյուր բնակիչ պետք է զգա իր անմիջական մասնակցությունը համայնքի զարգացման և տեղական ինքնակառավարման գործում:

Համայնքի հիմնական պրոբլեմները՝ առկա հիմնախնդիրները

- Գյուղատնտեսությունը զարգացած չէ: Խոտհարքների և արոտավայրերի դեգրատացված լինելու, դաշտամիջյան, հեռագնա արոտավայրերի ճանապարհների ոչ բարվոք վիճակի, առկա գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածության կամ իսպառ բացակայության պատճառներով բնակիչների քիչ մասն է զբաղվում անասնապահությամբ և հողագործությամբ:
 - Աշխատատեղերի բացակայության պատճառով բարձր է գործազրկության և արտագաղթի մակարդակը:
 - Չնայած սուբվենցիոն ծրագրերով մասամբ իրականացված ճանապարհաշինության աշխատանքներին՝ այնուամենայնիվ ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհները և փողոցների զգալի մասը գտնվում են անմխիթար վիճակում:
 - ոռոգման ջրի բացակայություն ոռոգման ցանցի քայքայվածություն
 - Բնակչության 38 %-ը սոցիալապես անապահով են, 8 %-ը՝ ծայրահեղ աղքատներ:
 - Համայնքում բարձր է արտերկիր մեկնողների քանակը:

Լուծման ուղիները

- Լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավում
- ՀՈԱԿ-ների ստեղծում և ընդլայնում
- Աշխատատեղերի ստեղծում
- Իրավագիտական ծառայությունների մատուցում
- Գովազդ
- Հանարային մասնակցություն
- Համագործակցություն միջազգային և հասարակական կազմակերպություններ հետ

Ծրագրի մշակման, քննարկման և հաստատման գործընթացը

Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Համայնքի հնգամյա ծրագրի կազմման աշխատանքներին մասնակցել են ՏԻՄ մարմինները, համայնքապետարանի աշխատակազմը: Համայնքի ղեկավարի կողմից ներկայացված՝ հնգամյա ծրագրում ընդգրկվելիք հարցերը քննարկվել են հանրային լսումներում, որին մասնակցել են 32 բնակիչ, ավագանու անդամները, աշխատակազմը և վարչական ղեկավարներ: Հանրային լսումների ընթացքում լսվել է յուրաքանչյուր առաջարկ և հնարավորության սահմաններում ընդգրկվել է հնգամյա ծրագրի մեջ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Փամբակ համայնքը բազմաբնակավայր համայնք է:

Փամբակ բազմաբնակավայր համայնքը կազմավորվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 24-ին ընդունված „ՀՀ Վարչատարածքային բաժանման մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին,, ՀՀ օրենքի համաձայն Ազնվածոր, Անտառամուտ, Արջուտ, Բազում , Դեբետ, Եղեգնուտ, Լեոնապատ, Հալավար /Լեոնաջուր , Ձորագետ, Ձորագյուղ, Մարգահովիտ, Վահագնածոր, Վահագնի, Փամբակ և Քարաբերդ համայնքների միավորման արդյունքում:

Համայնքի կենտրոնն է հանդիսանում Փամբակ համայնքը: Համայնքի բնակչությունը կազմում է 13215 մարդ: Համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից կազմում է 7 կմ, Երևան-Թբիլիսի ավտոմայրուղուց՝ 0 կմ, մայրաքաղաքից 127կմ, Երկաթուղուց՝ 550մ, Հայաստանի Հանրապետության պետական սահմանից՝ 93 կմ: Փամբակ համայնքը գտնվում է Լոռու մարզի հյուսիս-արևելյան մասում, տարածքը կազմում է 525.6732 կմ²: Համայնքը տեղակայված է Հայաստանի Հանրապետության հյուսիսային մասի Սպիտակի երկրաշարժի օջախի բարձր աստիճանի սեյսմիկ ռիսկի գոտում: Հյուսիսից Ձորագետ բնակավայրը 1350մ, հարավ-արևմուտքից Լեոնաջուր բնակավայրը 1700մ, արևմուտքից Լեոնապատ բնակավայրը 1000մ, հարավ- արևելքից Մարգահովիտ բնակավայրը 1750 մ բարձրության վրա: Հյուսիսից՝ պարուրված է Բազումի լեռնաշղթայով, հարավ-արևելքով՝ Գուգարքի լեռնաշղթայով: Համայնքով անցնում են Փամբակ, Աղստև և Դեբետ գետերը: Համայնքի կլիման խոնավ է, տեղումնառատ, մեղմ ձմեռներով ու զով ամառներով: Օդի միջին ջերմաստիճանը ձմռանը տատանվում է -3 աստիճանից մինչև -25 աստիճան՝ ըստ ցելսիուսի, ամռանը՝ +14-ից +30 աստիճան:

Համայնքի տարածքում գործում են՝ 13 ուսումնական հաստատություն, 7 նախադպրոցական հաստատություն, 12 բժշկական հաստատություն, 1 մշակույթի կենտրոն, 3 մշակութային խմբակներ, 3 գրադարան, 1 մարզադպրոց, 11 եկեղեցի, 42 խանութ, 14 գործարան, 13 հյուրանոց /հյուրատուն/, 9 վերամշակող կազմակերպություն, 1 հանքարդյունաբերական կազմակերպություն, 3 ազատ ժամանցի վայր, 7 հրդեհապայթյունավտանգ օբյեկտ: Համայնքի տարածքով անցնում է Երևան- Թբիլիսի, մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհները:

Բնակչության հիմնական մասը տեղափոխվել է Արևմտյան Հայաստանից, Սպիտակի և Գուգարքի շրջանից, իրենց հետ բերելով շատ գեղեցիկ ավանդույթներ և սովորույթներ, որոնք արդիական են բոլոր ժամանակների համար:

Բնակավայրերի հեռավորությունը մարզկենտրոնից՝
Ազնվածոր - 8կմ

Անտառամուտ – 21կմ

Արջուտ - 19կմ
 Բազում - 15կմ
 Դերետ - 23կմ
 Եղեգնուտ - 18 կմ
 Լեռնապատ-22կմ
 Լեռնաջուր/Հալավար/-32կմ
 Ձորագետ - 23կմ
 Ձորագյուղ - 24կմ
 Մարգահովիտ - 29կմ
 Վահագնի - 14կմ
 Վահագնաձոր - 8կմ
 Քարաբերդ - 3կմ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Փամբակ համայնքի բնակչությունը 2022թ. հունվարի 01-ի դրությամբ կազմում է 13215 մարդ:

Աղյուսակ 1: Փամբակ համայնքի ժողովրդագրության վերաբերյալ ցուցանիշներ 01.01.2022 թվականի դրությամբ

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	13215
	0-4 տարեկան	659
	5-6 տարեկան	305
	7-13 տարեկան	1090
	14 տարեկան	168
	15-17 տարեկան	415
	18տարեկան	140
	16-62 տարեկան	8648
	46-62 տարեկան	3099
	63 և բարձր տարիքի	2211

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական վիճակը

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն՝ 528.4 միլ. դրամ է:

Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը 27(%)

Ծառայությունների բնագավառում համայնքի հիմնական ձեռնարկություններն են՝

Համայնքում առկա են մեծ, փոքր և միջին ձեռնարկատիրություններ, ուսումնական հաստատություններ և այլ կառույցներ: Համայնքի տարածքում գործում է 14 գործարան 9 վերամշակող կազմակերպություն, սակայն դրանով հնարավոր չէ լուծել բնակչության զբաղվածության հարցը: Համայնքում գործում են սննդի 13 և առևտրի 42 կետեր:

Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքներն են կարտոֆիլը, ցորենը, գարին, միսը, կաթը, բանջարաբոստանային կուլտուրաները, պտուղները, մեղրը, որոնց իրացման հիմնական շուկա է ՀՀ Լոռու մարզը:

Վերջերս միտում կա՝ գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ զբաղվածների թվի մեծացման: Համայնքում տարեց տարի զարգանում է տուրիզմը, քանի որ կլիման բարենպաստ է՝ ամռանը զով, ձմռանը՝ մեղմ: Փամբակ համայնքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, եկեղեցիներով:

Համայնքի Դեբեդ գյուղում է գտնվում ԲՈԱՖ բարեգործական կազմակերպության Սմարթ կենտրոնը, 3 ձկնաբուծարան՝ հյուրատնային ցանցերով, „Թևավոր խաչ,, սրբավայրը:

Արջուտ գյուղի վարչական տարածքում է գտնվում „Վանաձորի սանմաքրում,, ՓԲԸ-ն՝ աղբավայրը, գործում է ոսկու հանք՝ „Բակտեկ էկո,, ՍՊԸ-ն:

Մարգահովիտ գյուղում է գտնվում 1872թ-ին կառուցված „Սբ. Գրիգոր Լուսավորիչ,, եկեղեցին, որի առջև գտնվում է միջնադարյան „Սբ. Կարապետ,, մատուռի ավերակները, Սարիսոփ բերի վրա է գտնվում վաղ բրոնզեդարյան մշակութային դաշտը, որտեղ գործել է բրոնզե ձուլարան: Գյուղում առկա է „Այբասան,, բնակատեղին, որտեղ գտնվել է 5-րդ դարի դարանոցի հետքեր: Պահպանվել է 18-րդ դարի ջրաղացը, գտնվում է „Կովկասյան մրտավարդենու,, արգելավայրը և „Մարգահովիտ,, արգելանոցը:

Վահագնի գյուղը հարուստ է ջրային ռեսուրսներով, գյուղում է գտնվում 1941-1945թթ Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակին կառուցված „Վահագն Վիշապաքաղի,, հուշարձանը, որը ՀՀ-ի ամենաբարձր հուշարձանների թվին է պատկանում:

Ձորագետրով է անցնում Մ6 միջպետական ճանապարհը, հարավ կովկասյան երկաթուղին, գործում է Թուֆենկյան հյուրանոցային համալիրը՝ բնակավայր գրավելով բազմաթիվ հյուրերի և տուրիստների:

Եղեգնուտ գյուղում է „Սբ. Գայանե,, եկեղեցին /Սբ. Կիրակի խաչքարի հիմքի վրա/, „Տալիբաբ,, սրբատեղին, գործում է „Եղեգնուտի թոչնաբուծարանը,,:

Լեռնապատ գյուղում է գտնվում 1862թ-ին կառուցված „Բագիլիկ,, եկեղեցին, Սբ. Նշան մատուռը, Մեծ Եղեռնի և երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հուշարձաններ, 13-րդ դարի գերեզմանոցի հետքերը՝ Ուոուտ հանդամասում: „Գաբրիել Մուքել,, ուխտատեղի մոտ կառուցվել է մատուռ: Գյուղում կան հանգստի գոտիներ, գործում է բազալտի բացահանք:

Բազում գյուղում է գտնվում „Կամակատար,, մատուռը, 12-րդ դարում կառուցված „Սբ. Մարիամ Աստվածածին,, եկեղեցին, որը վերջերս է վերանորոգվել, „Սբ. Նարեկ մատուռը, գործում են հանգստի գոտիներ: Գյուղում է գտնվում /ԴՈՒՑ-ի/ զորամասը:

Համայնքը աչքի է ընկնում կրթական բարձր մակարդակով: Համայնքում գործում է 13 դպրոց, 7 մանկապարտեզ և 3 գրադարան, 1 մշակութային օջախ: Մարզահովիտում գործում է 1 կրթամարզամշակութային համալիր, ուր ուսանում է 80 սան: Բնակավայրերում գործում են սպորտի մասնավոր խմբակներ:

Զբաղվածության մակարդակը միջին է, համայնքի բնակչության ընդհանուր թվաքանակից զբաղվածների թիվը կազմում է բնակչության 42%-ը, հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվում են իրականացնել ծրագրեր, որոնք համայնքի զարգացման խնդիրները կլուծեն հիմնովին՝

- 1) պաշտպանել համայնքի բնակչության իրավունքները և օրինական շահերը.
- 2) բարելավել համայնքի բնակչության կոմունալ-կենցաղային պայմանները.
- 3) ապահովել համայնքի շինությունների պահպանումը, շահագործումը և բարեկարգումը.
- 4) նպաստել մշակույթի, մարզական և առողջապահական օջախների նորմալ գործունեությանը.
- 5) համայնքի տարածքում ստեղծել նոր աշխատատեղեր՝ զարգացնելով փոքր և միջին բիզնեսը, գյուղատնտեսությունը.
- 6) հատուկ ուշադրություն դարձնել կրթության օջախների նորմալ գործունեությանը.
- 7) միջոցներ ձեռնարկել սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.
- 8) բարձրացնել համայնքապետարանի աշխատակազմի և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների կառավարման արդյունավետությունը:
- 9) ներհամայնքային ճանապարհների բարեկարգում տարիների ֆինասական վերլուծությունները և գալիք տարիների կանխատեսումները:

2022թ-ի ընթացքում համայնքը արդեն ներկայացրել է 7 սուբվենցիոն ծրագիր՝ 9 բնակավայրերի համար և սկսել է իրականացնել 2 խոշոր ծրագրեր: Առաջինը համայնքի ընդհանուր կոմունալ ծառայության ստեղծում ծրագիրն է, որը ներկայացվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին. ծրագրի բյուջեն 160.3 մլն դրամ: Նախատեսվում է ձեռք բերել 1 տրակտոր, 2 աղբատար, 1 բեռնատար մեքենա և 50 աղբաման: Երկրորդ ծրագիրը Տարածքային կառավարման և զարգացման նախարարության և GIZ-ի կողմից իրականացվող քաղաքացիների սպասարկման գրասենյակի՝ ԲՍԳ-ի կառուցումն է, որի բյուջեն մոտ 16 մլն. դրամ է: Ընթացիկ տարում նախատեսվում է սուբվենցիոն ծրագրերով Մարզահովիտ, Լեռնապատ, Բազում, Ձորագյուղ և Վահագնաձոր բնակավայրերում իրականացնել ճանապարհների սալարկում տուֆապատման միջոցով, Եղեգնուտ և Լեռնաջուր բնակավայրերում նախատեսվում է ստեղծել գիշերային լուսավորություն համակարգ, Դեբետում նախատեսվում է կառուցել մանկապարտեզ, իսկ Ձորագետում՝ ամրացնել համայնքային նշանակության շինությունը և կապիտալ նորոգել շենքի տանիքը:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է 2022 թվականների փաստացի բյուջեն և գալիք չորս տարիների՝ 2023-2026թթ կանխատեսումները.

Աղյուսակ 6: Համայնքի 2022 թվականների փաստացի բյուջեն և 2022-2026 թվականների բյուջեների կանխատեսումները

	Եկամտի տեսակը	Փաստացի		Կանխատեսվող				
		2022թ	2022թ	2023թ	2024թ	2025թ	2026թ.	
1	Հարկեր և տուրքեր	129303.4	129303.4	136500.0	140700.0	147000.0	152300.0	
2	Անշարժ գույքի հարկ	51400.8	51400.8	53000.0	55000.0	58000.0	60000.0	
3	Գույքահարկ /փոխադրամիջոցներից/	74637.6	74637.6	80000.0	82000.0	85000.0	88000.0	
4	Տեղական տուրքեր	3265.0	3265.0	3500.0	3700.0	4000.0	4300.0	
5	Պաշտոնական տրանսֆերտներ դոտացիա	351976.7	351976.7	370000.0	400000.0	425000.0	450000.0	
6	Պետբյուջեից սուբվենցիա	-	-	-	-	-	-	
7	Կապիտալ ներքին դրամաշնորհներ	-	-	-	-	-	-	
8	Կապիտալ արտաքին աղբյուրներ	-	-	-	-	-	-	
9	Այլ եկամուտներ	47081.66	47081.66	50000.0	52000.0	54000.0	55000.0	
10	Օրենքով և իրավ.ակտերով սահմանված համայնք բյուջե մուտք. ենթակա գումար	-	-	-	-	-	-	
	Տարեսկզբի ազատ մնացորդ	131794.2	-	-	-	-	-	
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵՎԱՄՈՒՏՆԵՐ	528361.76	528361.76	556500.0	592700.0	626000.0	657300.0	

	Ծախսի տեսակը	Փաստացի		Կանխատեսվող				
		2022թ	2022թ	2023թ	2024թ	2025թ	2026թ.	
	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ՝ Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն	276449.2	276449.2	280000.0	285000.0	290000.0	300000.0	
	Տնտեսական հարաբերություններ	136524.2	136524.2	140000.0	145000.0	145000.0	150000.0	
	Շրջակա միջավայրի պաշտպանություն	62425.0	62425.0	62500.0	63500.0	64500.0	65000.0	
	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	52924.1	52924.1	53000.0	54000.0	54500.0	55000.0	
	Հանգիստ, մշակույթ/սպորտ	56260.7	56260.7	57000.0	58000.0	59000.0	60000.0	
	Կրթություն	67511.6	67511.6	68000.0	68500.0	69000.0	70000.0	
	Սոցիալական պաշտպանություն	6000.0	6000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0	
	Պահուստային ֆոնդ	-	2061.1	5000.0	5000.0	5000.0	5000.0	
	ԸՆԴԱՄԵՆԸ ԸԾԱԽՍԵՐ	660155.9	660155.9	670500.0	684000.0	692000.0	710000.0	

2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը խոչընդոտող գործոնները բազմաթիվ են, որոնք փոխկապակցված են: Սկորև ներկայացնում ենք դրանցից կարևորագույնները.

- 1) ֆինանսական միջոցների սակավությունը.
- 2) ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դժվարությունը.
- 3) արդի գյուղատնտեսական անհասանելիությունը.
- 4) Աղբափայտ մեքենաների և աղբամանների սակավությունը.
- 5) ձեռնարկությունների ոչ բավարար քանակ.
- 6) երիտասարդների միգրացիան.
- 7) գյուղատնտեսության իրացման հետ կապված դժվարությունները, ցածր գները.
- 8) իրացման խնդրի հետ կապված փոքր քանակությամբ արտադրողականությունը
- 9) սակավ և ժամանակակից պահանջների չբավարարող աշխատուժ.

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմեր

- Համայնքում խմելու ջրի առկայությունը
- Համայնքի գազաֆիկացումը
- Բարձրագույն և միջնակարգ կրթությամբ մասնագետների առկայությունը
- Համայնքում հեռախոսակապի, ինտերնետ կապի և հեռուստատեսության առկայությունը
- Համայնքում հասարակական ոչ առևտրային կազմակերպության առկայությունը
- Մեղվաբուծության առկայություն
- Համայնքի գիշերային լուսավորության ցանցի առկայությունը
- Հակակարկտային կայանների առկայություն
- Զբոսաշրջային զարգացման հնարավորություն կենտրոնների առկայությունը
- Համայնքի աշխարհագրական դիրքը
- Գործող առևտրական օբյեկտները հիմնականում բավարարում են բնակչության պահանջները:
- Բարեխառն եղանակը և առկա արտադրարները հիմք են անասնաբուծության զարգացման:

Համայնքի թույլ կողմեր

- Ֆինանսական միջոցների սղությունը,
- Բարեբարների և դոնոր կազմակերպությունների բացակայություն,

- Ներհամայնքային ճանապարհների վաղ փիճակ, չնայած այն հանգամանքին, որ սուբվենցիոն ծրագրերով իրականացվել և ընթացքի մեջ են գտնվում բնակավայրերի կենտրոնական ճանապարհների կապիտալ նորոգման աշխատանքներ, այնուամենայնիվ մեծ է ոչ բարեկարգ ճանապարհների քանակը,

- Գյուղմթերքների արտահանման դժվարություն,
- Սպառման շուկաների դժվար հասանելիություն,
- Ներհամայնքային փողոցներում և ճանապարհներում ջրահեռացման համակարգերի բացակայություն,
- Գյուղ. տեխնիկայի ոչ բավարար քանակ և առկա տեխնիկայի մաշվածություն:
- Վայրի բնության պահպանություն, ծառահատումների կանխում, անտառածածկի ծավալի մեծացում՝ տառապունկերի միջոցով:

Հնարավորություններ

- Համայնքում գյուղատնտեսության զարգացման համար առկա հողային բավականին մեծ ռեսուրսների առկայությունը,
- Կենտրոնացված աղբահանության իրականացում:
- Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման,
- Գյուղ արտադրական ծավալների ավելացման հնարավորություն,
- Պեղական, տեղական և միջազգային ծրագրերի հնարավորություն,
- Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործման լայն հնարավորություններ:
- Բնապահպանական ծրագրերի իրականացման հնարավորություն
- Տուրիզմը մեծածավալ զարգացման հնարավորություն

Սպառնալիքներ

- Բնակչության արտագաղթ,
- Ծնելիության ցածր մակարդակ,
- Տնտեսական վիճակի վարթարացում,
- Անտառային տարածքների ոչնչացում,
- Բնակլիմայական պայմանների ազդեցությունը գյուղ մթերքների վրա,
- Գյուղատնտեսության ապահովագրության մեխանիզմի բացակայություն կամ քիչ օգտագործում,
- Կախվածությունը ավանդական գյուղատնտեսությունից:
- Բնական աղետների ռիսկերը

3 ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 Համայնքի զարգացման տեսլական

Փամբակ համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման, կրթական և մշակութային զարգացած ենթակառուցվածքների, բարեկարգ միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհներ ունեցող, բարձր որակի ծառայություններ մատուցող, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող վայր և վերջապես մեծ տուրիստական կենտրոն: Այս ամենի հիմքում պետք է դրվի յուրաքանչյուր բնակչի անմիջական մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

- 1) Համայնքի բոլոր բնակավայրերի գլխավոր ճանապարհների կապիտալ նորոգում ասֆալտապատման կամ փուֆով սալարկման միջոցով
- 2) Համայնքի բնակավայրերի գիշերային լուսավորության խնդրի լուծում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմամբ
- 3) Փամբակ համայնքի Դեբեդ բնակավայրում եվրոպական չափանիշներին համապատասխան մանկապարտեզի կառուցում
- 4) Համայնքի մանկապարտեզների վերանորոգում և գույքի ձեռք բերում
- 5) Համայնքում կոմունալ ծառայության հիմնում, աղբահանության կազմակերպում, ճանապարհների մաքրում սպասարկում և բարեկարգում, ջրագծերի կառուցում և ընդհանուր կոմունալ սպասարկում
- 6) Համայնքային սեփականություն հանդիսացող շենքի ամրացում և փանիքի կապիտալ նորոգում, որը հետագայում կարող է ծառայել որպես մշակութային օջախ, տարեցների ժամանցի վայր և մանկապարտեզ
- 7) Գյուղատնտեսության զարգացման խթանում Փամբակ համայնքում, գյուղ. տեխնիկայի ձեռք բերում
- 8) Ոռոգման ցանցի ստեղծում, հողագործության աշխատանքների ծավալի մեծացում
- 9) Սպորտ հրապարակների կառուցում, սպորտի զարգացում
- 10) Բնակչության սոցիալ տնտեսական վիճակի բարելավում
- 11) Բնական աղբյուրների ոռոգման կառավարում, գետի հունի ամրացում և սելավադարձերի մաքրում
- 12) Բնապահպանական ծրագրերի իրականացում, ծառատունկերի կազմակերպում
- 13) Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում, որի արդյունքում համայնքում կգործեն ձեռնարկությունների մասնաճյուղեր՝ մասնավորապես գյուղ մթերքների վերամշակման ձեռնարկություններ,
- 14) Համայնքի բնակչության բնական աճ: Գործարար միջավայրի բարելավում, աշխատատեղերի ստեղծում, համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում՝ նորաստեղծ ընտանիքներին պետական և տեղական աջակցության ծրագրերի առաջարկում,

- 15) Երիտասարդության ներգրավմամբ նախատեսվում է ակտիվ մշակույթային և մարզական միջոցառումների կազմակերպում, մարզական և մշակույթային խմբակների ստեղծում,
- 16) Համայնքի բյուջեի եկամուտների ավելացման համար նախատեսվում է համայնքային հողերի վարձակալությամբ փրամադրում՝ հասարակական և արտադրական կառույցների և առևտրի կետերի կառուցման համար,
- 17) Բարեգործության խթանման բնագավառում նախատեսվում է արտերկրում բնակվող մեր հայրենակիցներին պարբերաբար փողեկացում համայնքի հասարակական կյանքին, խնդիրներին և լուծման ուղիներին: Լայնորեն լուսաբանել համայնքում կատարված ցանկացած բարեգործություն: Կազմակերպել մեծարման ցերեկույթներ: Համագործակցում բարեգործական կազմակերպությունների հետ,
- 18) Համայնքում մեղվապահության ընդլայնում և էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրության ասֆիճանական զարգացում,
- 19) համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- 20) Նոր աշխատատեղերի ստեղծում և համայնքից միգրացիայի նվազեցում, բնակչության թվաքանակի կայունացում:
- 21) Սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ծրագրերի իրականացում,
- 22) համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են գյուղատնտեսություն, ճանապարհաշինություն, կոմունալ ենթակառուցվածքների վերականգնում, կենտրոնացված աղբահանման համակարգ: Վերը նշված խնդիրների իրականացման դեպքում կունենաք բարեկարգ, զարգացած համայնք, աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը կկրճատվի, աշխատատեղերի ավելացման և գյուղատնտեսությամբ զբաղվելու եկամտաբերության արդյունքում կկրճատվի արտագնա աշխատանքով զբաղվողների թիվը:

Պարտադիր ցուցանիշներն են՝

- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով,
- Համայնքի գրանցված բնակիչների թիվ փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով,
- Համայնքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների թիվը (անհատ ձեռնարկատերեր և ձեռնարկություններ),
- Ոչ գյուղատնտեսական բնագավառում ֆորմալ զբաղվածության աճ,
- Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով),
- Ծնողների բավարարվածությունը նախադպրոցական կրթությունից,
- Արտադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվի հարաբերությունը համայնքի դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով,
- Ծնողների բավարարվածությունը արտադպրոցական կրթությունից,

- Համայնքապետարանի կազմակերպված մշակութային միջոցառումների թիվ,
- Համայնքում գործող մշակութային խմբակների թիվ,
- Մշակութային խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի հարաբերությունը համայնքի երեխաների ու պատանիների թվին՝ արտահայտված տոկոսով,
- Ծնողների բավարարվածությունը մշակութային խմբակներից,
- Համայնքապետարանի միջոցներով կազմակերպված երեխաների ու պատանիների այցելություններ համայնքից դուրս մշակութային օջախներ,
- Համայնքապետարանի միջոցներով համայնքում կազմակերպված մարզական միջոցառումների թիվ,
- Համայնքային գրադարանի (ներառյալ էլեկտրոնային գրադարանի) առկայություն,
- Համայնքապետարանի օժանդակությամբ համայնքում գործող մարզական խմբակների թիվ,
- Մարզական խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի հարաբերությունը համայնքի երեխաների ու պատանիների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով,
- Ծնողների բավարարվածությունը մարզական խմբակներից,
- Համայնքային ենթակայության ճանապարհներին տեղադրված ճանապարհային նշանների թվի հարաբերությունն անհրաժեշտ ճանապարհային նշաններին, արտահայտված տոկոսով,
- Համայնքում կահավորված ավտոբուսային կանգառների հարաբերությունը ավտոբուսային կանգառների ընդհանուր թվին,
- Համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների ամեն փարի ասֆալտապատված հատվածի երկարության հարաբերությունը համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների երկարությանը, արտահայտված տոկոսով,
- Համայնքի՝ գյուղատնտեսությամբ զբաղվող ընկերության եկամտի տարեկան աճ,
- Բերքաբերության տարեկան աճ,
- Համայնքի մշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի հարաբերությունը ընդհանուր գյուղատնտեսական նշանակության հողերին արտահայտված տոկոսով,
- Համայնքի միջոցներով կազմակերպված ծրագրերի և միջոցառումների քանակ:

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

- 1) Համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության, մեղվապահության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- 2) Ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում,
- 3) Գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանում,
- 4) Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը,
- 5) Համայնքի բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը,
- 6) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը,
- 7) Համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը.

4. ՀՀԶԾ ֆինանսավորում

ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերն ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներ,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներ
- Սուբվենցիոն ծրագրեր
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ,
- Բարեգործություն /նվիրատվություն,
- Այլ աղբյուրներ:

Պարտադիր խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է /ըստ անձնագրերի/

5. ՀՀԶԾ-ի մոնիթորինգը

Իրականացվում է հարցումների և փաստերի ուսումնասիրության հիման վրա, որով գնահատվում է զարգացման ծրագրերի անձնագրերով նախատեսված ցուցանիշների իրական լինելը, ծրագրի իրականացման արդյունավետությունը, բնակչության սոցիալական վիճակի փոփոխությունը: Հսկվում է ծրագրի իրականացման ընթացքը: Յուրաքանչյուր ծրագրի նակատմամբ իրականացված մոնիտորինգի ցուցանիշը նշված է մոնիթորինգի վերաբերյալ հավելվածում՝ ըստ տարիների և թիրախային արժեքների:

ԹԻՎ 1 ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«Փամբակ համայնքի բոլոր բնակավայրերում ճանապարհների կապիտալ և ընթացիկ նորոգում, բարեկարգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում և շահագործում Ծրագրի իրականացման արդյունքում բնակիչները կունենան բարեկեցիկ և հարմարավետ երթևեկության պայմաններ, բարեկարգ ճանապարհները կնպաստեն տուրիզմի և զբոսաշրջության զարգացմանը, քանի որ Փամբակ համայնքի մեջ ներառված 15 բնակավայրերը հարուստ են պատմամշակութային ժառանգություններով և եկեղեցիներով:					
Ծրագրի անմիջական նպատակ	Բարեկարգ ճանապարհի ստեղծում, տրանսպորտի անվտանգ երթևեկություն, բնակչությանը սպասարկող նոր երթուղիների ստեղծում					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
	Բարեկարգ ճանապարհի ավելացում գծամետր	2021 0	2022 3700	2023 4000	2024 4000	2025 4500
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Վերանորոգված ջրհեռացման առուներ ունենալը					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
	Վերանորոգված ջրհեռացման առուների ավելացում գմ	2021 0	2022 3700	2023 4000	2024 4000	2025 4500
	2. Բարեկարգ ճանապարհ ունենալը					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2021 0	2022 3700	2023 4000	2024 4000	2025 4500
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Նախագծի պատվիրում 1.2 ֆինանսական միջոցների հայթայթում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 Մրցույթի հայտարարում 2.2 ճանապարհների կապիտալ նորոգում /ասֆալտապատում կամ տուֆով սալարկում					
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 10.0 մլն Կապիտալ ծախսեր՝ 1050.0 մլն. դրամ, որից 2022թ-ին կիրականացվի 209.0 մլն դրամի աշխատանք Ընդհանուր բյուջեն՝ 1060.0 մլն. դրամ					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1. դրամական միջոցներ 2. Նախագծի առկայություն 3. Աշխատուժ Ծրագիրը նախատեսվում է իրականացնել ՀՀ կառավարության և համայնքի բյուջեով նախատեսված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում:					
Ծրագրի հիմնական ռիսկերը	ֆինանսական միջոցների առկայություն					
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022-2026					
